Կ Ա Ր Ծ Ի Ք

ԱՆԻ ՀԱՄԼԵՏԻ ԳԱԼՍՏՅԱՆԻ «ԱՐԺՈՒԹԱՅԻՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՌԵԺԻՄԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ» ԹԵՄԱՅՈՎ ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ, ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ Ը.00.03 «ՖԻՆԱՆՍՆԵՐ, ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՈՒՄ» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՄԲ ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԹԵԿՆԱԾՈՒ ԳԻՏԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆԻ ՀԱՅՑՄԱՆ ՀԱՄԱՐ

Շուկայական հարաբերություններին անցմամբ պայմանավորված կարևոր նշանակություն են ձեռք բերում նաև շուկայական տնտեսության պահանջներին բավարարող նոր մեխանիզմների ներդրումը և համապատասխան միջավայրի ձևավորումը: Այս տեսանկյունից, տնտեսական համակարգի բնականոն գործունեության ապահովման առումով կարևոր դեր ունի արժույթային քաղաքականության իրականացումը և, մասնավորապես, արժութային կարգավորումը: Վերջինս, փաստորեն, պետության ֆինանսավարկային քաղաքականության կարևոր բաղկացուցիչներից մեկն է հանդիսանում, ինչով պայմանավորված էլ արժույթային քաղաքականությունը և փոխարժեքի կառավարումը կարևոր նշանակություն ունեն նաև տնտեսության ներքին հատվածի բնականոն գործունեության և զարգացման համար: Այդ առումով, անհրաժեշտ է ցուցաբերել համալիր մոտեցում նշված հիմնախնդիրների հետազոտման և լուծման ուղղությամբ, որը կներառի արտասահմանյան փորձը և հաշվի կառնի հանրապետության տնտեսության առանձնահատկությունները:

Գրախոսվող աշխատանքում իրականացված հետազոտությունները նվիրված են արժութային կարգավորման հիմնախնդիրների ուսումնասիրությանը, դրա վրա ազդող գործոնների բացահայտմանը, հանրապետությունում արժութային քաղաքականության արդյունավետության բարձրացմանն ուղղված նոր մոտեցումների մշակմանը, ինչով էլ պայմանավորված է ատենախոսության թեմայի ***արդիականությունը և հրատապությունը:***

Ատենախոսության ***կառուցվածքը*** հնարավորություն է ընձեռել բացահայտել հետազոտվող հիմնահարցի բնութագրական կողմերը, ապահովել դրանցով պայմանավորված խնդիրների լուծման հաջորդականությունը, պահպանել առաջարկված մոտեցումների գործնական նշանակության հիմնավորմանը և ամբողջական հետազոտության իրականացմանը հատուկ այլ սկզբունքները:

Աշխատանքի ներածական մասում դրված է հետազոտության նպատակը և տրված են դրան հասնելու համար լուծման ենթակա խնդիրները, Այստեղ բնութագրված են տեսական ու մեթոդական այն հիմքերը, որոնց վրա կառուցված են հեղինակի մշակումներն ու եզրահանգումները:

Ատենախոսության ***առաջին՝ «Արժութային կարգավորման ռեժիմի ընտրության հիմնախնդիրները զարգացող երկրներում և տնտեսական միության շրջանակներում»*** գլխում ներկայացվել են զարգացող երկրներում և տնտեսական միության շրջանակներում արժութային կարգավորման ռեժիմի ընտրության տեսական հիմքերը և միջազգային փորձը: Վերլուծվել են արժութային կարգավորման ռեժիմի ընտրության հիմնախնդիրները, ինչպես նաև արժութային կարգավորման տարբեր ռեժիմների ազդեցությունը տնտեսական աճի և արտահանման ներուժի վրա: Աշխատանքի այս բաժնում քննարկված են նաև արժութային հարաբերությունների զարգացման միտումները ժամանակակից պայմաններում:

Աշխատանքի ***երկրորդ՝ «Արժութային կարգավորումը Հայաստանի Հանրապետությունում և ԵԱՏՄ շրջանակներում»*** գլուխը նվիրված է Հայաստանում արժութային կարգավորման հիմնախնդիրների վերլուծությանը, ՀՀ դրամի վրա ազդող հիմնական էկզոգեն և էնդոգեն գործոնների բացահայտմանը, ինչպես նաև ԵԱՏՄ միասնական շուկայում ենթադրվող արժութային ինտեգրման հնարավորությունների գնահատմանը:

Ատենախոսության *երրորդ՝ «Արժութային փոխարժեքի ազդեցությունը արտահանման ներուժի և տնտեսական աճի վրա Հայաստանի Հանրապետությունում»* գլխում վերլուծվել է Հայաստանի արտահանման ներուժի վրա ՀՀ դրամի ազդեցությունը հայրենական ապրանքների արտաքին գնային մրցունակության միջոցով, ինչպես նաև բացահայտվել են տնտեսական աճի վրա ՀՀ դրամի ազդեցության ուղիները:

Ատենախոսությունում իրականացված վերլուծությունները հիմնված են դիտարկվող բնագավառի դասականների, ինչպես նաև ժամանակակից հետազոտողների ուսումնասիրությունների վրա: Մեթոդաբանական և տեղեկատվական առումով աշխատանքում օգտագործված են պաշտոնական շրջանառության մեջ գտնվող նյութեր և տվյալներ: Այս հանգամանքը թույլ է տվել հեղինակին ապահովել աշխատանքում ստացված արդյունքների անհրաժեշտ ***հիմնավորվածություն և հավաստիություն:***

Աշխատանքի ***գիտական նորույթը*** կայանում է նրանում, որ գնահատվել են ՀՀ դրամի փոխարժեքի ձևավորման էկզոգեն և էնդոգեն հիմնական գործոնները վեկտորային ավտոռեգրեսիոն (VAR) մոդելի կիրառմամբ, ՀՀ ԿԲ-ի կողմից իրականացվող արժութային կարգավորման ռեժիմի ազդեցությունը տնտեսության իրական հատվածի վրա՝ տնտեսական աճի կայուն և երկարաժամկետ տեմպերի խթանման (ապախթանման) տեսանկյունից, մակրոտնտեսական հիմնական ցուցանիշների հնարավոր ազդեցությունը ԵԱՏՄ միասնական շուկայում ենթադրվող արժութային ինտեգրման հնարավորությունների վրա, ինչպես նաև մշակվել է Հայաստանի Հանրապետության արտահանման ներուժի վրա ՀՀ դրամի փոխարժեքի տատանողականության ազդեցության գնահատման մոտեցում:

Մեթոդաբանական և մեթոդական տեսանկյունից հետազոտության արդյունքներն ընձեռում են որոշակի հնարավորություն կողմնորոշվել անցման փուլում գտնվող երկրներում արժութային կարգավորման համակարգի արդիականացման ուղղությունների բացահայտման և դրանց կատարելագործման հարցում:

Ատենախոսության ***գիտագործնական նշանակությունը*** պայմանավորված է նրանով, որ ուսումնասիրության արդյունքները կարող են օգտագործվել հանրապետությունում արժութային կարգավորման արդյունավետության բարձրացման ժամանակ:

Ատենախոսության վերաբերյալ կան ***դիտողություններ***, որոնք գրախոսվող աշխատանքի թեմայի շուրջ ուսումնասիրությունների շարունակման դեպքում, մեր կարծիքով, պետք է արժանանան հեղինակի ուշադրությանը: Դրանցից հատկապես անհրաժեշտ է նշել հետևյալները.

1. Ատենախոսությունում հեղինակը, քննարկելով փոխարժեքի վրա ազդող գործոնները, այդ համատեքստում ոչ բավարար խորությամբ է անդրադարձել առաջարկը պայմանավորող այնպիսի գործոնի համակողմանի ուսումնասիրությանը, ինչպիսիք են օտարերկրյա տրանսֆերտները: Ի դեպ, վերջիններիս ազդեցությունը խիստ զգալի է ոչ միայն ՀՀ դրամի փոխարժեքի, այլ նաև երկրի տնտեսության գործունեության վրա: Կարծում ենք, առաջիկա տարիներին օտարերկրյա տրանսֆերտների ծավալի հնարավոր փոփոխությունը և դրա ազդեցության գնահատումը պետք է արժանանար առավել խորքային հետազոտման:

2. Ազգային արժույթի փոխարժեքի տատանումները, ակնհայտորեն, ունեն ինչպես բացասական, այնպես էլ որոշ առումներով դրական ազդեցություն տնտեսական համակարգի առանձին օղակների վրա: Կարծում ենք, որ

ատենախոսության գիտագործնական նշանակությունը կբարձրանար, եթե հեղինակի կողմից համակարգված վերլուծության ենթարկվեին տնտեսական համակարգի վրա փոխարժեքի տատանումների դրական և բացասական հետևանքները՝ ինչպես կարճաժամկետ, այնպես էլ երկարաժամկետ հեռանկարում:

3. Տնտեսության դոլարիզացիայի կրճատման ուղղությամբ իրականցվելիք միջոցառումները, ակնհայտորեն, խիստ կարևոր նշանակություն ունեն ընդհանուր արժույթային քաղաքականության արդյունավետության բարձրացման համար: Մեր կարծիքով, նշված խնդրի լուծումը որոշակիորեն կապված է նաև անկանխիկ հաշվարկների համակարգի զարգացման հետ, ինչի վերաբերյալ ատենախոսությունում հեղինակի կողմից իրականացված ուսումնասիրություններն աչքի չեն ընկնում իրենց խորությամբ:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Արված դիտողությունները չեն նսեմացնում հետազոտության արժանիքները: Դրանք հետապնդում են հանրապետությունում արժութային կարգավորման համակարգի կատարելագործմանը նվիրված հետագա ուսումնասիրությունների արդյունավետության բարձրացման նպատակ:

Ա. Գալստյանի թեկնածուական ատենախոսությունն ունի որոշակի գիտագործնական նշանակություն, իրենից ներկայացնում է ինքնուրույն և ամբողջական հետազոտություն, որում դրված և լուծված են հանրապետության համար կարևոր ու արդիական խնդիրներ:

Հեղինակը հանդես է բերել մասնագիտական ու վերլուծական անհրաժեշտ մակարդակ, ինչի մասին են վկայում բուն ատենախոսությունը և դրանում ստացված արդյունքները: Աշխատանքում մշակված առաջարկությունները և կատարված

եզրահանգումները կարող են օգտագործվել հանրապետությունում իրականացվող արժութային քաղաքականության մշակման և իրականացման ընթացքում:

Հետազոտության հիմնական արդյունքները հրապարակված են: Ատենախոսության սեղմագիրը համապատասխանում է ուսումնասիրության բովանդակությանը և արտացոլում աշխատանքի կարևորագույն դրույթներն ու արդյունքները£

Ընդհանուր առմամբ, Ա. Գալստյանի «Արժութային կարգավորման ռեժիմի ընտրության հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում» թեմայով ատենախոսությունը համապատասխանում է «Հայաստանի Հանրապետության գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի» 6-րդ և 7-րդ կետերի, ինչպես նաև թեկնածուական ատենախոսություններին ներկայացվող պահանջներին, իսկ դրա հեղինակն արժանի է Ը.00.03- «Ֆինանսներ, հաշվապահական հաշվառում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը:

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴԴԻՄԱԽՈՍ,
տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր Վ. ԲՈՍՏԱՆՋՅԱՆ
24.09.2020թ.

Պարոն Վ. ԲՈՍՏԱՆՋՅԱՆԻ
ստորագրությունը հաստատում եմ՝
պ. գ. թ.
ԵՊՀ գիտական քարտուղար Լ. ՀՈՎՍԵՓՅԱՆ

24.09.2020թ.